Սայաթ Նովա

Ձենը դ քաղցը ր ունիս

Ղափիա, էապես լավ յարի վրա, Արութինի ասած:

Ձենը դ բաղցը ր ունիս՛ լամզով կու խոսիս.
Նա պահե քիզ, ումն օր ծառա իս, գո՛զալ,
Մեճկը դ ջեյրանի է, ռանգը դ՝ շաքարի,
Փռանգըստանու էկած խարա իս, գո՛զալ:

Ղումաշ ասիմ շուրեղեն է, կու մաշվի,
Սալբի ասիմ՝ ախը ր մին օր կու տաշվի,
Ջեյրան ասիմ՝ շատ մարթ քիզիդ կու յաշվի,
Բաս վո՛ւնց թարիփ անիմ՝ մարա իս, գո՛զալ:

Թե մանիշակ ասիմ՝ սարեմեն կոսին,
Թե ջավահիր ասիմ՝ քուրեմեն կոսին,
Թե վուր լուսին ասիմ՝ տարրեմե՛ն կոսին,
Արեգագի նը ման փարա իս, գո՛զալ:

Գուզիմ թե համաշա դը ռեանը դ գամ ուխտ,
Աճկիրը դ, կարմի՛ր վարթ, նուր բացարած տուխտ,
Լիզուդ՝ գը ր ի՛չ ունիս, ձեռը դ՝ գուլգազ թուխտ.
Ծովեմեն դուս էկած զարա իս, գո՛զալ:

Խիրա սիրմը դ սը ր տիս մեչը ցանեցիր,

Նազ ու դամզով, յա՛ր, իմ հոքիս հանեցիր,
Է՛ս քու Սալաթ Նովուն դու՛ն սպա՛նեցիր
Գըլխիդ էկած դադեն առա յիս, զո՛զալ: